



Լևոն Շանթ

Գիշերապահը

Գիշեր է. տա՛նկ, տա՛նկ, հսկայ ժամացոյց:
Հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.
միայն ինքն է որ՝ հանգոյցէ հանգոյց
փողոցներ կ'անցնի լուռ, քայլամուր:

Պաղ հովը կու գայ, կը գարնէ ճակտին,
ուր հին-հին յուշեր յանկարծ կը յածին,
ինչպէս երկնքի քօղէն ալ անդին
մոռցուած աստղեր մերթ վառ կ'առկայծին:

Ու միտքն ակամայ թափով մ'ինքնաբեր
կը թռչի հեռուն՝ տունը հայրենի.
Է՛, կեանքն ուրիշ էր, սրտերն ալ տարբեր
այն լեռներուն մէջ վեհ ու ամեհի:

Ու պարզ կը յիշէ... Գիշեր է խորին.
իրենք քոյր-եղբայր լարումով անհուն
լոկ պաշարած ալեհեր հանին՝
կ'ունկնդրեն անոր վէպերն հմայուն:

Եւ հանին ինքն ալ ներշնչուած արդէն
Մհերի ուժը կը պատմէ տղոց.
երբ յանկարծ բուքը տնակի երդէն

այլանդակ ձայնով կը հանէ հոգոց:

Ահեղ ոռնումով կարծես կը խօսի,
կը սուլէ բառեր բիրտ ու շխտած,
բա՛ն, որ դժոխքի խորքէն կը հոսի...
Ու խաշ կը հանէ հանին երկիւղած:

Իսկ տղաքը լուռ կը նային իրար
ու ամէն մէկը կը խորհի ինքնին,
որ նոր Մհեր մը դառնայ անպատճառ,
երբ ինքն ալ հասնի անոր տարիքին:

Եւ ահա՛... տա՛նկ, տա՛նկ, խորհո՛ղ ժամացոյց:
Հանգիստ է շորս դին, կը ննջեն բոլոր.
միայն ինքն է որ՝ հանգոյցէ հանգոյց
փողոցներ կ'անցնի լուռ, քայլամուր: